ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 102.6%, 2020թ. հունվար-ապրիլին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 98.9%, իսկ 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.0%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 650 մլրդ 793.5 մլն.դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատսխանաբար 65 մլրդ.579.8 մլն. և 77 մլրդ. 144.1 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 69 մլրդ. 373.4 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 15 մլրդ. 344.2 մլն. և 1 մլրդ. 170.2 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 918 մլրդ.876.3 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 102 մլրդ.788.9 մլն. և 32 մլրդ 124.7 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 551 մլրդ. 24.7 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 34 մլրդ. 414.5 մլն և 24 մլրդ. 479.2 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 100.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.2%-ի և 104.5%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 120.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 78.1%-ի և 108.0%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար- ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 104.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 91.4%-ի և 109.8%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 97.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.1%-ի և 117.0%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 180 մլրդ.304.9 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 64 մլրդ.592.3 մլն. և 80 մլրդ. 876.6 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 365 մլրդ.992.4 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 4 մլրդ.826.1 մլն. և 14 մլրդ. 183 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 97 մլրդ.721.6 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5 մլրդ.627.2 մլն. և 11 մլրդ. 853.8 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 6 մլրդ. 774.6 մլն. դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 186.4 մլն. դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ.403.3 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 108.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.1%-ի և 97.6%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 96.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.3%-ի և 107.8%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 109.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.9%-ի և 100.2%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 102.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 80.8%-ի և 101.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 81 մլրդ. 372.4 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 70 մլրդ. 409.2 մլն. և 59 մլրդ. 341.6 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 99 մլրդ. 835.2 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11 մլրդ. 125.5 մլն. և 17 մլրդ. 59.5 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-ապրիլին կազմել է 155 մլրդ. 423.6 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ. 427.7 մլն. և 24 մլրդ. 609.9 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 62.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.2%-ի և 138%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 113.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.8%-ի և 106.8%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 102.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.7%-ի և 118.8%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 105.4%, 2020թ. հունվար-ապրիլին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.1%, 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.7%: ՍԳԻ-ն 2021թ. ապրիլին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 105.1%, 2020թ. ապրիլին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.6%, 2019թ.ապրիլին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 1,232,196.0 մլն դրամ, ինչը 334 մլրդ. 15 մլն դրամով կամ 37.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 520 մլրդ.113 մլն. դրամով կամ 73%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. ապրիլի դրությամբ կազմել է 90428 մարդ, ինչը 4548 մարդով կամ 5.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7399 մարդով կամ 8.9%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. ապրիլի դրությամբ կազմել է 62711 մարդ, ինչը 1578 մարդով կամ 2.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2090 մարդով կամ 3.2%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 2 մլրդ. 170.3 մլն. դոլար, ինչը 145.6 մլն. դոլարով կամ 7.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 78.9 մլն. դոլարով կամ 3.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-ապրիլին կազմել է -532.9 մլն. դոլար, ինչը 88.4 մլն. դոլարով կամ 14.2%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 210.0 մլն. դոլարով կամ 28.3%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 818.7 մլն դոլար, ինչը 117.0 մլն. դոլարով կամ 16.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 65.5 մլն. դոլարով կամ 8.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-ապրիլին կազմել է 1,351.6 մլն դոլար, ինչը 28.6 մլն. դոլարով կամ 2.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 144.5 մլն. դոլարով կամ 9.7%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-ապրիլին նախնական գնահատմամբ կազմել է 194975 դրամ, ինչը 6557 դրամով կամ 3.5%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 19641 դրամով կամ 11.2%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 52 մլրդ.235.7 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -258 մլրդ. 863.2 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 311 մլրդ. 98.9 մլն. դրամ: 2020թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 18 մլրդ. 83.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 30 մլրդ 540.9 մլն դրամ և -48 մլրդ 624.2 մլն դրամ: 2019թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 78 մլրդ. 597.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -42 մլրդ. 804.9 մլն. դրամ -35 մլրդ. և 792.9 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ